ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 հունվարի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

3
(2853)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՎՔԵ՞Ր ԷԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼ ՔՊ ԴՐԱՄԱՀԱՎԱՔԻՆ

2023 թվականի հուլիսի 31-ին տեղի ունեցած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դրամահավաքին Հայաստանի բոլոր խոշոր գործարարներին հանձնարարված է եղել կլորիկ գումար հանգանակել կուսակցությանը. ՔՊ-ի դրամահավաք-երեկոյին 996 նվիրատուների հանգանակությունների արդյունքում հավաքվել է շուրջ 509 085 950 ՀՀ դրամ, այսինքն՝ 1 մլն 262 հազար 681 դոլար:

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս հրապարակել է ՔՊ դրամահավաքի յուղալի նվիրատուներին: Այս անգամ նրանց շարքին է դասվում «ԲԱՍ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ն, որը ՔՊ-ի դրամահավաքին փոխանցել է 700 հազար դրամ գումար: Ավելի քիչ գումար փոխանցել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը (300 հազար դրամ): ՔՊ-ի դրամահավաքին իր լուման է ներդրել նաեւ ՀՀ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության պետ Գոռ Բակլաչյանը (250 հազար դրամ): Հավելենք նաեւ, որ մամուլում դեռ նախորդ տարի լուրեր էին պտտվում, որ մի շարք հայտնի գործարարներ Նիկոլ Փաշինյանին իրենց դժգոհությունն են փոխանցել ՊԵԿ-ից եւ Գոռ Բակլաչյանի աշխատանքից ու վարչարարությունից: Նշենք, որ, ըստ մամուլում տարածված լուրերի, Գոռ Բակլաչյանը ՊԵԿ-ում դարձել է յուրատեսակ Վովայի Արշակ:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Կարեն Սարուխանյանը եւս մասնակցել է դրամահավաքին եւ հանգանակել է 100 հազար դրամ: Նա այն պատգամավորն է, որն իր մեքենայով բախվել էր բեռնատար մեքենային եւ վարել էր ոչ սթափ վիճակում:

«Ժողովուրդ» օրաթերթը կշարունակի մանրամասն ներկայացնել նշված ցանկը, որը, ի դեպ, ստացել ենք այն բանից հետո, երբ ՔՊ-ի դրամահավաքի ցանկը գաղտնի պահելու համար Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն տրամադրելու պարտավորեցման պահանջով դիմել էր դատարան՝ ընդդեմ ՔՊ-ի: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջարկով կողմերի միջեւ կնքվել է հաշտության համաձայնագիր, որով կուսակցությունը 2024թ. հունվարի 12-ին ԻԱԿ-ին է փոխանցել պահանջվող տեղեկությունները:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի հեղինակած աղմկահարույց՝ ««Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» նախագիծը, չնայած թեժ բանավեճերին ու դժգոհություններին, հունվարի 16-ի ԱԺ նիստում վերջնական ընդունվեց: ՔՊ-ական պատգամավորի նախագիծը դժգոհության ալիք էր բարձրացրել հենց իր թիմի ներսում. իշխանական պատգամավորներն անթաքույց իրենց անհամաձայնությունն էին հայտնում դրա հետ կապված: Չնայած նախագիծն ընդունվեց իշխանական պատգամավորների մեծամասնության կողմ քվեարկությամբ, բայց ՔՊ-ականներից մի քանիսը, ամեն դեպքում, մնացին անդրդվելի ու չմասնակցեցին Հայկ Սարգսյանի նախագծի քվեարկությանը: Այսպիսով, Հայկ Սարգսյանի նախագիծն ընդունվել է 63 կողմ, 27 դեմ, 6 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ: Իշխանական պատգամավորներից քվեարկությանը չեն մասնակցել Անդրանիկ Քոչարյանը, որը հենց հանձնաժողովի նիստում նախագծի քննարկման ժամանակ էր դժգոհությունն իր արտահայտել նախագծի մասով. վերջինս քվեարկության պահին նիստերի դահլիճում չի եղել: Քվեարկության ժամանակ բացակա են եղել նաեւ պատգամավորներ Հրաչյա Հակոբյանը եւ Արման Եղոյանը: Հայկ Սարգսյանի նախագծի քվեարկությանը ՔՊ-ական պատգամավորներից չեն մասնակցել Վիլեն Գաբրիելյանը, Գուրգեն Արսենյանը, Լենա Նազարյանը եւ Սարգիս Խանդանյանը: Ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավորները դեմ էին քվեարկել ՔՊ-ական պատգամավորի նախագծին, իսկ «Պատիվ ունեմ» խմբակցությունների պատգամավորները ձեռնպահ էին քվեարկել:

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի՝ նախորդ շաբաթվա տարեվերջյան ասուլիսի մի դրվագ այնքան էլ իր վրա ուշադրություն չսեւեռեց, մինչդեռ այս դրվագը լավագույնս ապացուցում է, որ Ավանեսյանը ձախողել է իր ղեկավարած ոլորտի կառավարումը: Հայաստանում այս պահին չկա Քովիդի դեմ պատվաստանյութ. նախարարությունը մրցույթներ է հայտարարել, որոնք չեն կայացել: «Մի քանի շրջափուլով մասնակից չի եղել, պատվաստանյութի առաջարկ չի եղել, այս վերջին մրցույթի արդյունքով, կարծես թե, ունենք մասնակից, եւ շուտով կկնքվի պայմանագիր, ու Քովիդի դեմ պատվաստանյութը եւս հասանելի կլինի Հայաստանում», - ասել էր Ավանեսյանը: Նախարարը ոչ թե հաստատակամորեն է խոսում պատվաստանյութերի մասին, այլ շեշտում՝ «կարծես թե»: Իսկ «կարծես թե»-ն նշանակում է՝ միգուցե այս մրցույթն էլ ձախողվի: Եւ ինչ պետք է անեն քաղաքացիները. կարծես թե ոչինչ. սպասելու են: Մինչդեռ, Առողջապահության նախարարության գլխավոր գործառույթներից մեկը պետք է լիներ հենց այս հարցերի կարգավորումն ու օր առաջ երկրում պատվաստանյութերի ապահովումը: Սա կարելի է որակել նախարար Ավանեսյանի հերթական ձախողումներից մեկը, մի նախարարի, որը, ի դեպ, շատ ակտիվ է պատվաստանյութերի թեմայով տարատեսակ համաժողովների մասնակցելու համար գործուղումների մեկնելու հարցում: Երկիրը պատվաստանյութով ապահովելու հարցը, սակայն, դեռ լուծված չէ: Չնայած այս ամենին՝ Անահիտ Ավանեսյանն այսքանից հետո էլ կշարունակի պաշտոնավարել, քանի որ Նիկոլ Փաշինյանը գնահատում է նախարարի ոչ թե մասնագիտական ունակություններն ու գործը, այլ իրեն նվիրվածությունը, իրեն չհակառակվելը: Թերեւս պետք է որ Մարտունու բժշկական կենտրոնի հետ կապված հարցում վարչապետին ըստ էության խաբելուց հետո նա պաշտոնանկ արված լիներ, մինչդեռ հակառակին ենք ականատես լինում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավական փոխօգնության վարչության հանձնումների եւ դատական հանձնարարությունների բաժնի պետ Անուշ Ռշտունու դեմ քրեական գործ է հարուցվել դատարանի որոշման կատարմանը խոչընդոտելու համար՝ Քրեական օրենսգրքի 243-րդ հոդվածի հատկանիշներով: Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, թե ինչպես է վերջինս Երեւան քաղաքի վարչական շրջաններից մեկում տեղի ունեցած խնամակալության եւ հոգաբարձության խորհրդի նիստից հետո պաշտոնայինն ոչ վայել վարքագիծ դրսեւորել՝ վիրավորանքներ եւ սպառնալիքներ հնչեցնելով հակառակ կողմի հասցեին: Մասնավորապես, փաստաբան Տիգրան Ստեփանյանը, ահազանգելով մեր խմբագրություն, հայտնել էր, որ Անուշ Ռշտունին իր վստահորդին սպառնացել էր «առյուծների փայ դարձնել»: Գրել էինք նաեւ, որ Անուշ Ռշտունին ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Միհր Սեդրակյանի սանիկն է. վերջինս ունի առյուծներ, եւ, հավանաբար, հենց նրա առյուծներով էլ Ա. Ռշտունին սպառնում է քաղաքացուն: Մեզ հաջողվեց ճշտել, որ այս դեպքից հետո սույն պաշտոնյան ոչ միայն չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության, այլեւ շարունակել է դրսեւորել հակաօրինական վարքագիծ, ինչը հենց հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու պատճառ է դարձել: ***Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:***

ԶՐՈՒՅՑ

«ՊՍԵՎԴՈՔԱՂԱՔԱՊԵՏԻՑ ԴԱՐՁԱՎ ՊՍԵՎԴՈԵՐԵՎԱՆՅԻ»

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է Կենտրոն վարչական շրջանի նախկին թաղապետ Վիկտոր Մնացականյանը, ում հետ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Երեւանի Կենտրոնում տեղի ունեցող իրադարձություններից:

-Պարոն Մնացականյան երեկ հայտարարություն տարածվեց Երեւանի քաղաքապետարանի կողմից, որ որոշում է կայացվել Երեւանի Օղակաձեւ այգին հիմնովին քանդելու մասին: Չեն ասում՝ ինչ են կառուցում. մոտավորապես հասկացել ենք՝ ինչ-որ կանաչապատման նպատակներ ունեն: Կարդալով իրենց հաղորդագրությունը՝ ի՞նչ կարելի է եզրակացնել, այդտեղ ի՞նչ է կառուցվելու՝ ըստ Ձեզ:

-Ես ավելի քան համոզված եմ, որ ոչ մի բան տեղի չի ունենալու: Ստորջրյա հոսանքներ կան, որ մենք չենք իմանում... Օրինակ՝ ընկերներիցս Կարենը Քոչարյան գրել էր՝ արդյոք հնարավոր է, որ նպատակը Նեմեսիսի արձանի տեղափոխումն է, բայց չգնանք "Теория заговора" ուղղությամբ, այլ փորձենք այս հարցին նայել որպես քաղաքային պլանավորող: Երեւանի Օղակաձեւ այգին՝ էդ ամբողջ վեց հատվածները, կարիք ունեն առաջին հերթին վերաիմաստավորվելու, դրանից հետո գրագետ հետազոտությունների, հետազոտության հիման վրա վերլուծությունից հետո՝ մասնակցային պրոցեսի առաջնային սպառողների հետ, այսինքն՝ Օղակաձեւ այգու վեց հատվածների հարակից թաղամասերի բնակիչների, Կենտրոնի եւ ամբողջ Երեւանի բնակիչների հետ: Պետք է անել հետաքրքիր հարցազրույցներ, պետք է աշխատել մարդաբանների, ազգագրագետների, ճարտարապետների, քաղաքաշինարարների հետ եւ հասկանալ՝ ինչ է երեւանցիների համար Օղակաձեւ այգին, կազմել Օղակաձեւ այգու ամբողջ պլանը, որը 32 հեկտար է, դրանից հետո միայն ըստ հատվածների ունենալ հստակ մոտեցում: Մենք հիմա խոսում ենք 4-րդ հատվածի մասին: Կորտերը միակ բանն էր, որ այգի մարդկանց էր բերում, աշխուժություն էր ապահովում: Իհարկե, կան հասարակական սննդի սրճարաններ:

-Պե՞տք է արդյոք քանդվեն այդ սրճարանները՝ ըստ Ձեզ:

-Ես դեմ չեմ, որ այգիներում լինեն սրճարաններ, որովհետեւ մեր այգիները, Օղակաձեւ այգին չունեն մենեջմենթ: Եթե, օրինակ, չլինեն սրճարաններ, սկսում են լույսը անջատել, կատարվում են ինչ-որ վատ բաներ, հետեւողական չեն լինում քաղաքային իշխանությունները:

-Հիմա Տիգրան Ավինյանի նպատակը ո՞րն է՝ ըստ Ձեզ. կորտերն է քանդում, որի տնօրինությունը մեզ ասում է, որ այդտեղ մարդիկ են գալիս, մարզվում են...

-Դժվար է հասկանալ. ամենաապահով գաղտաբառերը գիտե՞ք՝ ում մոտ են. անգրագետ մարդկանց, որովհետեւ եթե անգամ նրանց տրամաբանությունը փորձում ես հասկանալ, հաջողություն չես ունենում: Այսօրվա քաղաքային իշխանությունները չունեն բավարար գիտելիքներ, փորձառություն քաղաքային կառավարման եւ քաղաքային պլանավորման: Քաղաքական կամք չի կարող ունենալ մի մարդ, որը ընտրվել է ընդամենը երեւանցիների 8-9 տոկոսի ձայնով եւ դե յուրե անցել է կուսակցություններից մեկի՝ մենք ասում էինք բարի կամքով, բայց վերջին իրադարձությունները «Հանրային ձայն»-ի ցույց տվեցին, որ կուսակցության ղեկավարին խաբել են, տակից աշխատել են...Հիմա էդ մարդը չունի այդ լեգիտիմությունը, եւ լեգիտիմություն չունենալով՝ պսեւդոքաղաքապետից դարձավ պսեւդոերեւանցի:

-Մենք ո՞նց կարող ենք թույլ չտալ քանդել: Եթե իրենք գան իրենց տեխնիկաներով եւ քանդման աշխատանքներ անեն, ի՞նչ ենք անելու:

-Կարեւոր մի դրույթ կա, որ անգամ, համոզված եմ, վարչապետը չգիտի. նախ՝ Օղակաձեւ այգին ճանաչված է գլխավոր հատակագծով որպես մարզական նշանակության հող: Նշանակության հողը քաղաքապետը չի կարող փոխել. դա որոշ պրոցեդուրաներից հետո պիտի հետ գա քաղաքապետարան, անցնի ավագանու նիստով, հաստատվի, հետո գնա կառավարություն, որտեղ եթե կա հանրային գերակա շահ, պիտի փոխհատուցվի եւ այլն... Այդ պրոցեդուրաները չանցած՝ մարդիկ արդեն հայտարարություններ են անում: Դա նշանակում է, որ կամ մի բան այն չէ երկրում, կամ էդ մարդիկ դիլետանտներ են:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆ

«Ո՞ՐՆ Է, ԲԱԲՈ՛, ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ»

Սեպտեմբերի 27-ին՝ պատերազմ սկսվելուց 2-3 ժամ հետո, Նիկոլ Փաշինյանը, բանուգործը թողած, Facebook-ի ի իր էջում հրապարակում է իր բանաստեղծությունը: Այս մասին հունվարի 17-ին ԱԺ-ում հարցուպատասխանի ժամանակ, նշեց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը եւ ընթերցեց այն.

«Տիգրանի քաղաքի լանջերին,
Հորիզոն է ծփում անսահման,
Դարեր անց մենք այստեղ ենք նորից,
Մենք կանգնած ենք հեռվին հանդիման»:

Ապա շարունակեց. «Դեռ ավելին՝ հրապարակում է զինտեխնիկայի տեղաշարժի վիդեո, երբ ՊՆ-ն թախանձագին խնդրում էին քաղաքացիներին ռազմական գաղտնիք չհրապարակել: Հիմա հարց Նիկոլ Փաշինյանին. Ստեփանակերտում որ այս բանաստեղծությունը կարդում էիք, պատկերացնո՞ւմ էինք, որ դա Ձեր հայրենիքն է, թե՞ մտածում էինք, որ գալու է մի օր, որ հայրենիք ու պետություն գաղափարները հակադրելու եք իրար»:

Ի պատասխան՝ Նիկոլ Փաշինյանն ասաց. «Ձեր նշած երկտողը իր արդիականությունը չի կորցրել: Ամենեւին էլ հայրենիքը պետությանը չի հակադրվում: Երբ հայրենիքը փորձում ենք հակադրել պետությանը, ո՛չ հայրենիք ենք ունենում, ո՛չ էլ պետություն: Իսկ հայրենիք ունենում ենք այն ժամանակ, երբ հասկանում ենք, որ հայրենիքը պետությունն է: Դուք կարող եք ասել՝ նոր հասկացա՞ք: Այո՛, «Հայաստանն իմ օջախն է, ժողովուրդն իմ ընտանիքն է»: Բազմաթիվ դրվագներով ճշգրիտ արտահայտվում են մեր հոգեբանության, մտածողության, պատմության, ապագայի մասին մեր պատկերացումներում առկա հակասություններն ու հակադրությունները: ՀՀ կառավարության պարտքն է դրանց հետ առերեսվել, դրանք կառավարել, ինչը կառավարությունը իրեն տված մանդատով անում է»:

Գեղամ Մանուկյանն արձագանքեց. «Օջախն ատամներով պաշտպանում են, որ օջախից մի սանտիմետր չկորի, ընտանիքի անդամների վրա էլ ոստիկանական դուբինկաներ չեն բարձրացնում: Եթե դպրոցում Հովհաննես Շիրազի «Ո՞րն է, բաբո՛, մեր հայրենիք»-ը լավ սովորացրած լինեին, հայրենիքն ու պետությունը չէիք հակադրի, Արագածն ու Արարատը չէիք հակադրի, եւ խուսանավելով՝ չէիք փորձի ասել՝ հայրենիքը հիմա 29 800 քկմ-ն է, թե՞ 2016-ին Նիկոլ Փաշինյանի գրած «Տիգրանի կառուցած քաղաքն» էլ է հայրենիք»:

Փաշինյանն ասաց. «Ես մի երկրի վարչապետ եմ, որի ամենաբարձր գագաթը Արագած լեռն է: Ո՛չ դուք, ո՛չ որեւէ մեկը չի կարող դա հերքել: Որեւէ մեկը կարող է ավելի մեծ զգացումներ ունենալ, օրինակ, Ջոմոլունգմայի նկատմամբ, բայց Հայաստանի Հանրապետության կառավարության իրավազորությունը տարածվում է Արագածի վրա»:

ԱՇԽԱՏԱԿԻՑԸ՝ ՔՊ–Ի ՕԼԻԳԱՐԽԻՑ ԽԱԲՎԱԾ

«Ժողովուրդ» օրաթերթը օրեր առաջ գրել էր, որ «Նալբանդյան» օղիների արտադրող, Ծաղկաձորի «Գոլդեն Փելիս» հյուրանոցը, կասկածելի ձեւով Սեւանի «Հայրապետ» հյուրանոցային համալիրը եւ Հովիկ Աբրահամյանի տունը սեփականաշնորհած հեղափոխական օլիգարխ Նարեկ Նալբանդյանը հյուրանոցի գլխավոր տնօրեն, ազգությամբ եգիպտացի Մահմուդ Սաադին աշխատացրել եւ առանց համապատասխան վճարի հեռացրել է աշխատանքից: Թեեւ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Նարեկ Նալբանդյանը, հարցին հստակ մեկնաբանություն տալու փոխարեն, շատ ագրեսիվ էր արձագանքել՝ խնդրելով իրեն չզանգել, բայց մենք խոսում ենք փաստերով: «Ժողովուրդ» օրաթերթին հաջողվել է կապ հաստատել նաեւ ազգությամբ եգիպտացի, «Գոլդեն Փելիս» հյուրանոցի արդեն նախկին գլխավոր մենեջեր Մահմուդ Սաադի հետ:

-Պարոն Սաադ, որքա՞ն ժամանակ է՝ աշխատում եք «Գոլդեն Փելիս» հյուրանոցում: Ի՞նչ պաշտոն եք զբաղեցրել:

-Ես «Գոլդեն Փելիս» հյուրանոցում աշխատում եմ 2022 թվականի փետրվարից, բայց 2023 թվականի դեկտեմբեր ամսին աշխատանքից ազատման դիմում եմ ներկայացրել իմ կամքով: Ուզում եմ շեշտել, որ ինձ չեն ազատել, ես եմ դիմում գրել: Հյուրանոցի գլխավոր մենեջերի պաշտոնն եմ զբաղեցրել:

-Ո՞րն է եղել պատճառը ազատման դիմում գրելու:

-Անձնական խնդիրներով:

-Մենք տեղեկություններ ունենք, որ Դուք աշխատել եք, սակայն հյուրանոցի տնօրինությունը Ձեզ չի վճարել աշխատանքի դիմաց: Աշխատավարձի հետ կապված ի՞նչ խնդրի եք բախվել:

-Չեն վճարվել միայն դեկտեմբեր ամսվա համար, երբ արդեն աշխատանքից ազատման դիմում եմ գրել: Կցանկանամ նշել նաեւ, որ ես այս խնդրի մասին չեմ բարձրաձայնել, քանի որ չեմ ցանկանում մեծ աղմուկ բարձրանա. հուսամ՝ կլուծվի խնդիրը:

-Իսկ փորձե՞լ եք հանդիպել «Գոլդեն Փելիս» հյուրանոցի սեփականատեր Նարեկ Նալբանդյանի հետ՝ պարզելու՝ ինչու չեք վճարվել:

- Ո՛չ, քանի որ ես հաճախ եմ արտերկրում լինում ու չեմ հանդիպել: Աշխատավարձերը վճարում է հյուրանոցի ֆինանսական բաժինը. նրանցից պարզաբանում դեռ չեմ ստացել:

-Կա՞ն էլի աշխատակիցներ, որոնք չեն վճարվել:

-Ես նման տեղեկություն չունեմ:

-Իսկ ի՞նչ եք պատրաստվում անել, ինչպե՞ս եք պատրաստվում Ձեր աշխատավարձը հետ ստանալ:

-Ես այժմ Հայաստանում չեմ, առաջիկայում կվերադառնամ ու կփորձեմ հանդիպել հյուրանոցի տիրոջ հետ՝ խնդիրը պարզելու համար:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄ

Հունվարի 15-ին ադրբեջանական Milli TV յութուբյան ալիքում տեղադրվեց մի տեսանյութ, որը նկարահանվել է օկուպացված Արցախի Հաթերք գյուղի՝ արցախյան պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշահամալիրում եւ նրան հարակից տարածքում: Տեսանյութում երեւում է, թե ինչպես են հուշահամալիրը եւ շրջակա գերեզմանոցը ենթարկվել վանդալիզմի:

«Փաստորեն, գյուղերում սկսվել է հայկական հետքերը՝ գերեզմանները վերացնելու գործընթացը: Այս գործընթացը նորություն չէ, մենք, դժբախտաբար, ունենք նաեւ դրա նախադեպը եւ՛ Նախիջեւանում, եւ՛ Արցախում»,- մեզ հետ զրույցում ասաց Արցախի «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն Արմինե Հայրապետյանը:

Նրա խոսքով՝ սա էլ հերթական վանդալիզմն է, որը եղել է Հաթերք եւ Հադրութի Հակակու գյուղերում:

«Վրեժխնդրության ինչ-որ մի բան էլ կար, որովհետեւ, ինչքան հասկացա, Ադրբեջանից ինչ-որ մեկը արցախյան առաջին պատերազմի ժամանակ մեր զոհված ազատամարտիկների գերեզմանի մոտ կանգնած հստակ խոսում էր»,-ասաց Արմինեն:

Նրա կարծիքով՝ նրանց այս քաղաքականությունը շարունակվելու է: Արցախի հայկականությունը հաստատող բավականին մեծ փաստարկ են հայկական գերեզմանոցները, որ այստեղ դեռ հին ժամանակներից ապրել են հայերը, նրանք էլ ամեն ինչ անելու են հենց այդ փաստերը վերացնելու համար:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՇՈՐԹՈՒՄ՝ ԲՏԱ ՆԱԽԱՐԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հունվարի 15-ին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Նոր Նորքի բաժին է դիմել Երեւանի բնակիչ 27-ամյա Արթուր Խաչատրյանը եւ հայտնել, որ իր նկատմամբ շորթում է իրականացվել. հաղորդում է Shamshyan.com-ը:

Արդեն ժամանած ոստիկաններին վերջինս հայտնել է, որ հունվարի 14-ի ժամը 20:00-ից մինչեւ հունվարի 15-ի ժամը 07:15-ն ընկած ժամանակահատվածում անհայտ անձը կամ անձինք գողացել են իր կողմից շահագործվող եւ բնակության վայրում՝ Հովհաննիսյան փողոցում իր կողմից կայանված Toyota մակնիշի 100 LL 55 համարանիշի ավտոմեքենայի կողային հայելիները:

Նա ոստիկաններին հայտնել է նաեւ, որ գողը կամ գողերը դիմապակուն թողել են տելեգրամյան հասցե, իսկ գողության հետեւանքով իրեն պատճառվել է մոտ 200 հազար դրամի վնաս:

Դեպքի փաստով ոստիկանության Նոր Նորքի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին:

Կայքի տեղեկություններով՝ նշված Toyota-ն հաշվառված է ՀՀ կառավարության հաշվեկշռում եւ սպասարկում է Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանին, իսկ Ա. Խաչատրյանը նախարարի վարորդն է:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՔՊ–Ն՝ ՍԵՎ ՑՈՒՑԱԿՈՒՄ

Հետեւյալ գերատեսչությունների ղեկավարները 2023 թվականի ընթացքում խախտել են մարդկանց կամ կազմակերպությունների՝ տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքը՝ տրամադրելով անհիմն կամ թերի պատասխաններ, անօրինական մերժումներ կամ անպատասխան թողնելով տեղեկություն ստանալու հարցումները: Սեւ ցուցակը կազմվում է՝ հետեւյալ չափանիշների հիման վրա:

2023 թվականի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցումների առցանց հարթակում գրանցվել է 70 տեղեկություն ստանալու հարցում: Հարցումների 86%-ի դեպքում ստացվել է ժամանակին լիարժեք պատասխան, 7%-ի դեպքում՝ ուշացած լիարժեք: Հարցումների մեկ տոկոսին տրվել է «անհիմն մերժում», եւս մեկ տոկոսը ստացել է «անհիմն պատասխան» կարգավիճակը: Հարցումների 4%-ը մնացել է անպատասխան:

Լեւոն Հովհաննիսյան, Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ, քաղաքապետի պաշտոնակատար (17.03.2023-13.10.2023)

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել ՀՀ քաղաքացի Արսեն Չալյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու գործում: 2023 թ.-ի հուլիսի 3-ին Երեւանի քաղաքապետարան է ուղարկել տեղեկություն ստանալու հարցում՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ վարչական տույժի արդյունքում բռնագանձված եւ Երեւանի քաղաքապետարանին փոխանցված գումարի վերադարձի ընթացակարգի վերաբերյալ: Պատասխան գրությամբ, սակայն, Երեւանի քաղաքապետարանը չի տրամադրել ներկայացված հարցերի պատասխանները: Քաղաքացի Չալյանը 2023թ. հուլիսի 10-ին ուղարկել է կրկնակի հարցում, որին ի պատասխան ստացված գրության մեջ եւս հարցերից եւ ոչ մեկին անդրադարձ չկա: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2023 թ. օգոստոսի 21-ին քաղաքացու հարցերն ուղղել է քաղաքապետարան այս անգամ արդեն ԻԱԿ-ի անունից: Պատասխան գրությամբ, սակայն, Քաղաքապետարանն անհիմն պատասխան է տրամադրել: Ավելի ուշ, ԻԱԿ-ի կրկնակի հարցմանն ի պատասխան, քաղաքապետարանը տրամադրել է պահանջվող տեղեկությունը:

Սամվել Առաքելյան, ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2023 թվականի հուլիսի 7-ին դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ խնդրելով տրամադրել Արդարադատության նախարարության կողմից ներկայացված տեղեկանքի պատճենը (կամ փաստաթղթի հասանելիությունն ապահովող ակտիվ հղումը), որի մասին հիշատակվում է ՀՀ Սահմանադրական դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված ««ՀՀ՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՍԴՈ-1175 որոշման մեջ: ՍԴ-ն 10.07.2023 թ.-ին պատասխան գրությամբ մերժել է տրամադրել պահանջվող տեղեկությունը: ՍԴ աշխատակազմի ղեկավարի մերժումը ԻԱԿ-ը որակել է անհիմն (հիմնավորումները՝ կրկնակի հարցման մեջ) եւ բողոքարկել՝ ուղարկելով կրկնակի հարցում, որը մնացել է անպատասխան:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն

ԻԱԿ-ը 2023 թվականի օգոստոսի 23-ին տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ խնդրելով Երեւանի ավագանու ընտրություններին ընդառաջ տեղի ունեցած՝ կուսակցության դրամահավաք-երեկոյի ընթացքում գումար հանգանակած նվիրատուների ցանկը, ինչպես նաեւ նույն դրամահավաք-երեկոյի ընթացքում կուսակցությանը հանգանակած եւ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանաչափը գերազանցող նվիրատվությունների գումարի վերադարձման մասին տեղեկություններ: ԻԱԿ-ի հարցման առիթ դարձել էր «Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական հասարակական կազմակերպության «infocom.am» լրատվական կայքի դիմումը:

Կուսակցությունը չի պատասխանել ԻԱԿ-ի առաջին հարցմանը, անպատասխան է թողել նաեւ 2023 թ.-ի սեպտեմբերի 11-ին ուղարկված տեղեկություն ստանալու կրկնակի հարցումը՝ արդյունքում խախտելով ԻԱԿ-ի՝ տեղեկություն ստանալու իրավունքը:

2023 թ. դեկտեմբերի 4-ին ԻԱԿ-ը տեղեկություն տրամադրելու պարտավորեցման պահանջով դիմել է դատարան: 2023 թ.-ի դեկտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը որոշել է հայցն ընդունել վարույթ: Ավելի ուշ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության առաջարկով, կողմերի միջեւ կնքվել է հաշտության համաձայնագիր, որով կուսակցությունը 2024թ. հունվարի 12-ին ԻԱԿ-ին է փոխանցել պահանջվող տեղեկությունները:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

30 ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դավոսի Համաշխարհային տնտեսական ֆորումի շրջանակներում նախագահ Վահագն Խաչատուրյանը հանդիպում է ունեցել ՄԱԿ Փախստականների հարցերով բարձր հանձնակատար Ֆիլիպպո Գրանդիի հետ:

Զրույցի ընթացքում երկուստեք դրական է գնահատվել Հայաստանի եւ Բարձր հանձնակատարի գրասենյակի միջեւ ավելի քան 30 տարվա արդյունավետ համագործակցությունը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների հումանիտար եւ սոցիալական խնդիրներին եւ դրանց լուծմանն ուղղված քայլերին:

Ֆիլիպպո Գրանդին առանձնահատուկ կերպով հետաքրքրվել է ավելի քան 100 հազար արցախահայ փախստականների սոցիալական եւ բնակարանային ապահովվածության պայմաններով, մարդասիրական այլ խնդիրներով: Այս համատեքստում հանրապետության նախագահը մանրամասն ներկայացրել է կարճ ժամանակահատվածում Հայաստանի կառավարության իրականացրած ծրագրերն ու միջոցառումները, որոնք ուղղված են բռնի տեղահանվածների ինչպես առաջնային, այնպես էլ համալիր խնդիրների լուծմանը:

Հանդիպման ավարտին պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել աշխատանքային շփումներն ու սերտ համագործակցությունն առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ԱՌԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ

Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների դատախազությունում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում ուսումնասիրվել են Աջափնյակ վարչական շրջանի «Նորաշեն» թաղամասում գտնվող՝ N 207 մսուր-մանկապարտեզին հատկացված՝ պետական սեփականություն հանդիսացող հողատարածքի կադաստրային փաստաթղթերը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Աջափնյակ համայնքի ավագանու՝ 2002 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ, առանց որեւէ իրավական հիմնավորման, համայնքի ենթակայության ներքո գտնվող N 207 մսուր-մանկապարտեզը նույն թվականի սեպտեմբերի 1-ից լուծարվել է: Լուծարումը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային ռեգիստրում գրանցում չի ստացել: Երեւանի քաղաքապետի՝ 2002 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ՝ վերոնշյալ մսուր-մանկապարտեզի՝ 10 հազար 223.7 քմ մակերեսով հողատարածքը վարձակալությամբ 25 տարի ժամկետով տրամադրվել է Աջափնյակ համայնքի թաղապետարանին:

2002 թվականի հոկտեմբերի 15-ին Աջափնյակ համայնքի N 207 մսուր-մանկապարտեզի անունից Աջափնյակի թաղապետարանի եւ Երեւանի քաղաքապետարանի միջեւ կնքվել է հողի վարձակալության պայմանագիր: Նույն տարվա նոյեմբերի 15-ին վերոնշյալ մսուր-մանկապարտեզի հողատարածքի նկատմամբ գրանցվել է Երեւան քաղաքի Աջափնյակ համայնքի սեփականության իրավունքը:

«Կրթության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական ուսումնական հաստատությունների գույքն օտարվելու դեպքում կարող է օգտագործվել միայն ուսումնական նպատակներով:

Աջափնյակ համայնքի ավագանին, չունենալով N 207 մսուր-մանկապարտեզը ոչ կրթական նպատակներով օտարելու իրավունք, 2002 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ՝ մանկապարտեզը 20 մլն դրամով վաճառել է քաղաքացի Յու.Հ.-ին: Աջափնյակ համայնքի թաղապետը, ավագանու կայացրած որոշման հիման վրա, 2002 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ՝N 207 մսուր-մանկապարտեզի շենքը՝ 2477.84 քմ մակերեսով, 20 մլն դրամով վաճառել է նույն քաղաքացուն:

Երեւանի քաղաքապետարանի եւ Աջափնյակ համայնքի մի շարք պաշտոնատար անձինք 2003 թվականի փետրվարի 5-ին Յու.Հ.-ի հետ կնքել են 10 հազար 223.7 քմ մակերեսով հողի վարձակալության պայմանագիր:

Երեւանի քաղաքապետը 2003 թվականի դեկտեմբերի 26-ի որոշմամբ հաստատել է, որ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչության եզրակացության համաձայն՝ 10 հազար 223.7 քմ մակերեսով հողամասից 6 հազար 644.2 քմ մակերեսով հատվածն ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածում նշված սահմանափակումների ցանկում (օտարման ոչ ենթակա տարածքներ), իսկ 3 հազար 579.5 քմ մակերեսով հատվածն ընդգրկված է սահմանափակումների ցանկում եւ օտարման ենթակա չէ: Քաղաքապետի որոշմամբ՝N 207 մսուր-մանկապարտեզի՝ 10 հազար 223.7 քմ մակերեսով հողամասը բաժանվել է առանձին գույքային միավորների՝6 հազար 644.2 քմ եւ 3 հազար 579.5 քմ մակերեսներով:

2003 թվականի դեկտեմբերի 30-ին եւ 31-ին վերոնշյալ երկու հողամասերը վարձակալությամբ տրվել են Յու.Հ.-ին եւ Վ.Հ.-ին, իսկ 2004 թվականի հունիսի 23-ին հողամասերն ամբողջությամբ օտարվել են վերոնշյալ անձանց (հետագայում գույքերը գրավադրվել են Հայաստանի Հանրապետությունում գործող տարբեր առեւտրային բանկերում, իսկ 2021 թվականին նշված հողատարածքից 2 հազար 900 քմ մակերեսով հողամասը նվիրատվությամբ հանձնվել է Ա.Ե.-ին):

Նկատի ունենալով, որ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են առերեւույթ հանցանքի դեպքեր՝ դատախազը հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե:

Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) (2 դրվագ):

Դատախազությունը պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում միջոցներ է ձեռնարկում համայնքային սեփականություն հանդիսացող գույքը համայնքին վերադարձնելու նպատակով:

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՕՊԵՐԱՏԻՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՊԵՏԸ՝ ԿԻՆ

Հիմք ընդունելով ««Քրեակատարողական ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-310-Ն օրենքը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հրամանով դադարեցվել է Քրեակատարողական ծառայության մի շարք կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը, ստեղծվել են նոր կառուցվածքային ստորաբաժանումներ, կրճատվել են հաստիքային միավորներ, սահմանվել են նորերը:

Այս մասին հայտնում են Քրեակատարողական ծառայությունից:

Այսպիսով, դադարեցվել է Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի, ինչպես նաեւ բոլոր քրեակատարողական հիմնարկների օպերատիվ բաժինների գործունեությունը, եւ կրճատվել են դրանց հաստիքային միավորները: Փոխարենը ստեղծվել է Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի Օպերատիվ վարչություն՝ քրեակատարողական հիմնարկներում տեղակայվող տարածքային բաժիններով եւ բաժանմունքներով:

Քրեակատարողական ծառայության պետ, արդարադատության գնդապետ Ամբակում Գրիգորյանի համապատասխան հրամաններով վերոնշյալ լուծարված բաժինների հաստիքային միավորները զբաղեցնող քրեակատարողական ծառայողներն ազատվել են իրենց զբաղեցրած պաշտոններից, նրանցից ոմանք նշանակվել են Օպերատիվ վարչության համապատասխան պաշտոններում, մի մասն էլ գրանցվել է Քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվում:

Հաշվի առնելով ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի առանձնահատկությունները՝ նշված կադրային փոփոխությունների շրջանակներում առաջին անգամ օպերատիվ ստորաբաժանման պետի պարտականությունների կատարումը վերապահվել է կին ծառայողի:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Զինվորական դատախազության Երեւանի կայազորի զինվորական դատախազի տեղակալ Էդգար Շահումյանը պաշտոնը ստանձնել է 2020 թվականի հունիսի 29-ին: Ըստ 2023 թվականին ներկայացված հայտարարագրի՝ Շահումյանը միանձնյա սեփականությամբ հայտարարագրել է 3 անշարժ գույք՝ ավտոտնակ, բնակարան՝ բազմաբնակարան շենքում եւ բազմաբնակարան շենքի ոչ բնակելի հատվածում: Անշարժ գույքերը գտնվում են Երեւանի Կենտրոն վարչական շրջանում, որոնք ձեռք են բերել 2012, 2013 եւ 2018 թվականներին:

Հավելենք նաեւ, որ բնակարանը հիփոթեքով է ձեռք բերված, այդ պատճառով ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 16 մլն 256 հազար դրամ: Տվյալ տարվա սկզբում Շահումյանը հայտարարագրել է 2017 թվականին ձեռք բերված՝ 2016 թվականի արտադրության Toyota մակնիշի ավտոմեքենա:

Բանկային հաշիվների ավանդները տարեվերջին կազմել են 9 մլն դրամ, բանկային հաշիվների մնացորդները կազմել են 296 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել էին 10 մլն դրամ եւ 13 հազար ԱՄՆ դոլար:

Հաշվետու տարվա եկամուտները կազմել էին 17 մլն 123 հազար դրամ, որից 7 մլն 410 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ դատախազությունից: Դատախազ Շահումյանը ՀՀ ՊԵԿ-ից ստացել է 1 մլն 489 հազար դրամ, որը, ըստ երեւույթին, եկամտահարկի վերադարձի օրենքով գումարի վերադարձ է հիփոթեքի մայր գումարը վճարելու համար: Շահումյանը 7 մլն 776 հազար դրամ վարձակալության գումար է ստացել «ՎԱՅԼԴԲԵՐԻՋ» օնլայն գնումների սպասարկման կետից:

Հավելենք նաեւ, որ Շահումյանը հայտնի է որպես Մուրացանի հոսպիտալի նախկին պետ Արամ Ասատուրյանի, ինչպես նաեւ Սիսիանի զինվորական հոսպիտալի ներկայիս պետ Դանիել Մկրտչյանի գործով մեղադրող դատախազ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՆԳՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հունվարի 16-17-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 71 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված: Մասնավորապես, խարդախության՝ 12, թմրամիջոցի հայտնաբերման՝ 10, մարմնական վնասվածք պատճառելու՝ 8, անձնական ունեցվածքի գողության՝ 7, զենք-զինամթերքի առգրավման՝ 5, ֆիզիկական ներգործության՝4, խուլիգանության՝3, հոգեկան ներգործության, շորթման, դրամանենգության եւ շինարարական, լեռնահանքային կամ այլ աշխատանքների ընթացքում աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության ապահովման կանոնները կամ պահանջները խախտելու՝ 2-ական, սպանության փորձի, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, պետական ունեցվածքի գողության, բնակարանային գողության, վստահված գույքը հափշտակելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, պաշտոնեական կեղծիքի կամ անփութության, ընդերքի պահպանման կամ օգտագործման պահանջները խախտելու, ազատությունից ապօրինի զրկելու եւ սառը զենքի հայտնաբերման՝1-ական դեպք:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունվարի 16-ից 17-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 71 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԳԻՆԻՆԵՐԸ ԵՎ ՉՈՐԱՑԱԾ ԴԵՆԴՐՈՊԱՐԿԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանն ամանորի առթիվ 44-օրյա պատերազմում զոհված տավուշցիների ընտանիքներին նվեր է ուղարկել, փաթեթի մեջ 2 հատ գինի ու «բանբոներկա»՝ կոնֆետների հավաքածու են եղել: Մեկ լիտրանոց շշերով գինիները Իջեւանի գինու, կոնյակի գործարանի արտադրանք են: Ամանորի շեմին՝ դեկտեմբերի 27-ին, մարզպետ Հայկ Ղալումյանը շնորհակալագրեր է հանձնել մի խումբ անձանց, այդ թվում՝ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի տնօրենների խորհրդի նախագահ Էմին Եղիազարյանին: Վերջինիս գլխավորությամբ Իջեւանի գինու, կոնյակի գործարանը, սկսած 2020 թվականի ամռանից, միլիոնավոր դոլարների վնաս է տվել Իջեւան քաղաքի մարգարիտը համարվող Իջեւանի դենդրոպարկին, գինու գործարանին հարակից գոտում ավերել է Աղստեւ գետի հունը, այնտեղ ապօրինի մեծ պատ կառուցել, այդ ամենի հետեւանքով ջրազրկել Իջեւանի դենդրոպարկը, ինչի հետեւանքով այդ բուսաբանական այգում մեծ քանակի հազվագյուտ, արժեքավոր ծառեր ու տնկիներ են չորացել: 2021 թվականի հոկտեմբերին այդ առթիվ քրեական գործ է հարուցվել, սակայն պատճառված վնասը հաշվարկելու համար փորձաքննություններ չեն անցկացվել, ոչ մեկի մեղադրանք չի առաջադրվել: ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով, թե այդ քրեական գործն ինչ ընթացքում է, դատախազությունը այդ գործի դատախախազական հսկողություն իրականացրել է արդյոք: Գլխավոր դատախազությունից պատասխանել են, որ հարցմանս կպատասխանեն 30 օրվա ընթացքում:

ՏՎՅԱԼՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ ԵՆ

Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը 2023թ. դեկտեմբերի 22-ին որոշել է Դիլիջան համայնքի 2023 թվականի բյուջեով նախատեսված «Սոցիալական օգնություններ» նախահաշվի «4729» հոդվածից 1 260 000 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ փոխանցել «Կոնվերսբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի հաշվեհամարին համայնքապետարան դիմած եւ սոցիալապես անապահով վիճակում գտնվող թվով 42 քաղաքացիներին դրամական օգնություն հատկացնելու նպատակով: Որոշմանը կից հավելվածում ներկայացված է 20-50 հազար դրամ օգնություն ստացած քաղաքացիների անուն-ազգանունները, անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները եւ այլ տվյալներ: Դիլիջանի համայնքապետարանում չգիտե՞ն, որ քաղաքացիների անձնական տվյալները հրապարակման ենթակա չեն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Եվրոպական միության (ԵՄ) պատվիրակության, ԵՄ գլխամասային գրասենյակի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրվել է նիստ՝ նվիրված 2017 թվականին ստորագրված Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) վեցամյակին: Հանդիպման նպատակն էր նաեւ ընդգծել ՀՀ-ԵՄ հարաբերությունների շրջանակում ՀԸԳՀ-ի կարեւոր նշանակությունը, ինչպես նաեւ գնահատել կիրարկման ներկա փուլը եւ բարձրացնել արդյունավետությունը:

Ինչպես ՁԼՄ-ներին տեղեկացրին ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի գրասենյակից, ՀԸԳՀ արտագնա նիստին ներկա է գտնվել 70 մասնակից, որոնք ակտիվ մասնակցություն են ունեցել գործընկերների միջեւ մտքերի փոխանակությանը: Հանդիպումը յուրահատուկ հարթակ է դարձել՝ գնահատելու ՀԸԳՀ առաջընթացը եւ ծրագրելու կիրարկումը խթանող բովանդակալից ռազմավարություններ: Հայաստանի կառավարության ներկայացուցիչները մանրամասներ են ներկայացրել ՀԸԳՀ-ի կիրարկման շրջանակում ձեռք բերված իրենց փորձի մասին, քննարկել են հարցեր՝ հաջողությունների, մարտահրավերների, կարիքների եւ միասին ավելի լավ աշխատելու ուղիների առնչությամբ:

«Արտագնա նիստի ընթացքում ՀՀ կառավարության կողմից նախանշվել են կոնկրետ ոլորտներ, որոնց ուղղությամբ հաջողությամբ իրականացվել են ՀԸԳՀ-ին առնչվող բարեփոխումներ՝ ցուցադրելով համաձայնագրի շնորհիվ արձանագրված շոշափելի ձեռքբերումները: Նշվեցին այն ոլորտները, որոնց ուղղությամբ բարեփոխումներն իրականացվել են առանձնակի դժվարություններով՝ ուշադրություն հրավիրելով մշտադիտարկման եւ հաղորդակցության ուժեղացման ուղիների վրա եւ ընդգծելով, որ Հայաստան-ԵՄ գործընկերությունն ունի համագործակցային բնույթ:

Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար դեսպան Վասիլիս Մարագոսը բարձր գնահատեց փոխվարչապետ Միեր Գրիգորյանի հետ տեւական համագործակցությունը եւ ի նպաստ ՀՀ քաղաքացիների փոխադարձ հանձնառությամբ շոշափելի եւ կայուն արդյունքներ խթանելու ջանքերը: Ընգծելով ՀԸԳՀ-ի՝ որպես նման ձեւաչափում ներգրավվելու անկյունաքարային ուղղության կարեւոր գործիքի նշանակությունը՝ դեսպան Մարագոսը նշեց Եվրոպական միության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ գոյություն ունեցող ընդհանուր արժեքներն ու շահերը: Դեսպանը վերահաստատեց աջակցությունը ժողովրդավարական եւ տնտեսական բարեփոխումներին, որը թույլ կտա նպաստել Հայաստանի արդիականացման գործընթացի արագացմանը»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ փոխվարչապետ Միեր Գրիգորյանը նշել է, որ ՀԸԳՀ-ի իրականացումը, չնայած դրա ստորագրումից հետո ստեղծված դժվարին իրավիճակներին, շարունակական բնույթ է կրել: Փոխվարչապետը շնորհակալություն է հայտնել ԵՄ կողմից իրավունքի գերակայության ապահովմանն ուղղված բարեփոխումներին եւ տնտեսական նախաձեռնություններին աջակցության արագացված ընթացակարգ ապահովելու համար: Փոխվարչապետ Գրիգորյանը վերահաստատել է, որ Հայաստանը պատրաստ է խորացնել համագործակցությունը ԵՄ-ի հետ եւ առաջ գնալ առանցքային բարեփոխումների իրականացման ճանապարհով: Նա ընդգծել է Հայաստանի զարգացման այս փուլում ԵՄ անդամ պետությունների գիտելիքը եւ փորձը ներդնելու ԵՄ գործուն դերակատարությունը:

Նշվում է, որ երկու կողմերը վերահաստատել են ավելի արդյունավետ համագործակցությամբ ՀԸԳՀ կիրարկմանը նպաստելու իրենց հանձնառությունը՝ երկուստեք արտահայտելով ԵՄ-Հայաստան գործընկերության հետագա ամրապնդման ուղղությամբ իրենց նվիրվածությունը:

ԱՐՑԱԽ

ՀԱՄԱՅՆՔԸ ԳՐԿԱԲԱՑ Է ԸՆԴՈՒՆԵԼ

Չարենցավանում բնակություն է հաստատել 2700 բռնի տեղահանված արցախցի:



«2023թ. Արցախի հայաթափումից հետո Չարենցավան համայնքում բնակություն է հաստատել ավելի քան 2700 բռնի տեղահանված արցախցի: Սկզբնական շրջանում եղել են մարդիկ, որ բնակվել են համայնքում գործող հյուրանոցներում, բայց կարճ ժամանակահատվածում համայնքի եւ նրանց համատեղ ջանքերով հնարավոր եղավ նրանց առանձին բնակարաններով ապահովելը»,-Armlur.am-ի հետ զրույցում ասել է Չարենցավանի համայնքապետարանի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սաթենիկ Բալաբեկյանը: Մեր զրուցակցի խոսքով՝ արցախցիները համայնքում փորձում են հնարավորինս շուտ ինտեգրվել. որոշներն արդեն աշխատում են, իսկ որոշներն էլ իրենց սեփական գործն են սկսել համայնքում: «Արցախցիներին համայնքը գրկաբաց է ընդունել: Նրանք էլ աշխատասեր մարդիկ են. առաջին օրվանից փորձել են աշխատանք գտնել սեփական ուժերով առաջնային կարիքները հոգալու համար: Այս պահին արցախցիներն աշխատում են համայնքում գործող կարի ֆաբրիկաներում, խանութներում, դպրոցում, մանկապարտեզում, շատերն էլ սեփական մեքենայով տաքսի ծառայությամբ են զբաղվում: Ողջունելի է նաեւ այն, որ համայնքում մեր հայրենակիցներն իրենց սեփական գործն են սկսել: Համայնքում բացել են բանջարեղենի եւ հրուշակեղենի խանութներ, որտեղ ներկայացնում են արցախյան խմորեղենները: Այդպես նրանք ե՛ւ ավելի ամուր կպահպանեն իրենց ավանդական խոհանոցը, ե՛ւ նոր մշակույթ ու կոլորիտ կբերեն մեր համայնք»,- ասում է Ս. Բալաբեկյանը: Մեր զրուցակցի խոսքով՝ պետական աջակցությունից բացի, համայնքապետարանը եւս սննդի, կենցաղային, տնտեսական ապրանքների տեսքով աջակցություններ է տրամադրել Արցախից բռնի տեղահանված անձանց:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԿԱՐԳ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ Է ՆԳՆ-Ն

Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1864-Ն որոշմամբ հաստատվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու, ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը եւ դրա տրամադրման կարգը:

Ինչպես ԶԼՄ-ներին տեղեկացրին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունից, ըստ ընդունված կարգի՝ ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթուղթ են անձնագիրը եւ ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայականը: 2024 թվականի հունվարի 28-ից այս երկու փաստաթղթերը Հայաստանի Հանրապետությունից դուրս գալիս եւ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելիս վավեր են համարվելու միայն միասին գործածելու պարագայում:

«Ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականին անձը հաստատող փաստաթղթերը տրվում կամ փոխանակվում են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառում ունենալու դեպքում Հայաստանում ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության, իսկ օտարերկրյա պետություններում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից: Ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայականը տրամադրվում է դիմումի հիման վրա: 16.01.2024 թվականի դրությամբ ստացված դիմումների թիվը 36 200 է, տպագրված վկայականների քանակը՝ 35 800, իսկ դիմումատուներին տրված վկայականները 28 490-ն են:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ առաջիկա շաբաթ օրը՝ հունվարի 20-ը եւս աշխատանքային է լինելու անձնագրային ստորաբաժանումներում, եւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձինք այդ օրը կարող են ներկայացնել ժամանակավոր պաշտպանության վկայականի դիմումներ, ինչպես նաեւ կատարել այլ անձնագրային գործողություններ:

Հունվարի 20-ին՝ ժամը 09.00-18.00-ն, աշխատանքային ռեժիմով կաշխատեն Ներքին գործերի նախարարության՝ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության Կենտրոնականի, Նոր Նորքի, Շենգավիթի, Արաբկիրի, Ավանի, Քանաքեռ-Զեյթունի, Մալաթիայի, Էրեբունու, Մաշտոցի, Չարբախի, Կոտայքի, Վաղարշապատի, Աշտարակի, Արարատի խմբի /ք. Վեդի/, Արարատի բաժանմունքի, Արտաշատի, Գորիսի, Իջեւանի, Նաիրիի, Հրազդանի, Նոր Հաճնի, Մեծամորի տարածքային անձնագրային ստորաբաժանումները»,- պարզաբանում է Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարությունը:

ԶՈՀ՝ ԲԱՆԱԿՈՒՄ

«ԱՆՁՆԱԿԱՆ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՑԱՎ Է». ՊԱՊԻԿՅԱՆ

«Ձնահյուսի հետեւանքով զինծառայողի զոհվելու դեպքի օրերին որեւէ տեղաշարժ չիրականացնելու գրավոր հանձնարարական է եղել». այս մասին ասաց Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը Ազգային կառավարության հետ հարցուպատասխանին՝ անդրադառնալով հունվարի 13-ին մարտական դիրքից մշական տեղակայման վայր գնացող ժամկետային զինծառայող Բենիամին Մանուչարյանի՝ ձնահյուսի հետեւանքով զոհվելու դեպքին:

Պապիկյանը նախ նշեց, որ յուրաքանչյուր դեպք, դժբախտ պատահար իր համար անձնական դժբախտություն ու ծանր ցավ է: Նախարարը ցավակցեց զոհված զինծառայողի հարազատներին:

«Հարցի ամբողջական պատկերը կարող է պարզ դառնալ ծառայողական պատշաճ քննության արդյունքում: Միեւնույն ժամանակ, քննչական գործողությունների արդյունքում ի դերեւ կգան բոլոր այն խնդիրները, որոնք այս դժբախտ պատահարի պատճառ են դարձել»,- ասաց Պապիկյանը:

Ըստ նախարարի՝ խնդիրն ունի երկու կողմ՝ մեկը բնական պայմաններն են: «Վերջին 10 օրվա ընթացքում շատ բարդ, երբեմն անտանելի եղանակային պայմաններ են բարձր լեռնային հատվածներում: Այս պահին մենք ունենք 200-ից ավելի դժվարամատչելի դիրքեր, ըստ էության, կարելի է ասել՝ փակ, որոնք ամենօրյա ռեժիմով բացվում են, բայց եղանակային պայմանների բերումով մշտապես փակման ենթակա են բքի եւ ձնահյուսերի պատճառով: Սրանցից զատ, կան նաեւ դժվար հասանելի ուղղություններ: Ունենք շուրջ 1 տասնյակի հասնող դիրքեր, որտեղ բոլոր տիպի եղանակային պայմաններում, այդ թվում՝ ամառային ամենատաք շրջանում, մեքենայով հնարավոր չէ հասնել այդ դիրքերին: Այսինքն՝ ուզենք, թե չուզենք, զինծառայողների տեղաշարժը մինչեւ այդ դիրք, նաեւ սնունդը հասցնելն իրականացնում ենք հետիոտն կամ այլ մեխանիզմներով: Դրանք պայմանավորված են տվյալ դիրքերի աշխարհագրական դիրքով»,-ասաց նախարարը:

Պապիկյանը նշեց՝ գործ ունենք վերջին 3 տարվա ընթացքում ձեւավորված առաջնագծի հետ, որտեղ ոչ բոլոր ուղղություններն են հայտնի՝ որպես պոտենցիալ ձնահյուսերի ուղղություններ: Անվտանգությունն ապահովելու համար մշտապես իրականացվում են թե պայթեցման, թե կանխարգելիչ աշխատանքներ, սակայն կան իրավիճակներ, երբ բնությունն անկանխատեսելի է:

«Իհարկե, այս խնդրի դիպվածում կան նաեւ պարտականությունները պատշաճ կատարելու մեջ թերացումներ: Անուններ եւ պաշտոններ չեմ հնչեցնի, բայց սա չի կարող չունենալ պատասխանատուներ»,- ասաց նախարարը՝ հավելելով, որ դա ի հայտ կարող է բերել միայն պատշաճ քննությունը:

Նա ընդգծեց, որ գոնե վերադաս հրամանատարության կողմից առկա են եղել այդ օրերի համար գրավոր հանձնարարականներ՝ որեւէ տեղաշարժ չիրականացնելու:

«Վերադաս հրամանատարության, կորպուսային հրամանատարության կողմից կան գրավոր հանձնարարականներ այդ օրերին որեւէ տեղաշարժ չկատարել: Ավելին՝ հատուկ բանակային կորպուսի տարածքում այդ օրը մենք ունեցել ենք 5 զինծառայող, ում ծառայության ժամկետն ավարտվել է, սակայն եղանակային անբարենպաստ պայմաններից ելնելով՝ տվյալ զինծառայողների 4-ը շարունակել են մնալ դիրքերում, եւ միայն 2 օր անց է հնարավոր եղել նրանց իջեցնել դիրքերից եւ նրանց զորացրել տուն»,-ասաց նա:

Անդրադառնալով Բենիամին Մանուչարյանի դեպքին՝ նախարարն ասաց, որ կա վարկած, որը բավականին հիմնավոր է, որ շատ է եղել արտաքին ճնշում: Պապիկյանը հորդորեց զինծառայողների հարազատներին բոլոր պարագաներում զերծ մնալ ԶՈՒ սպաների նկատմամբ անհարկի պահանջներից, ստիպողական կամ զգայական վարքագծով նրանց ստիպելուց, որ կատարեն պարտականություններ, որոնք իրավունք չունեն կատարել:

«Մի խումբ հատուկ տեխնիկայի միջոցով գնացել է զինծառայողին ընդառաջ, սակայն եղանակային պայմանները թույլ չեն տվել, որ նրանք մոտենան դիրքին. զինծառայողը եկել է նրանց ընդառաջ, սակայն ձնահյուսի բերումով տեղի է ունեցել այն, ինչ տեղի է ունեցել»,-ասաց Պապիկյանը:

ԱՐՑԱԽ

«ԿԱՐԾՈՒՄ ԵՄ՝ ԻՆՁ ԷԼ ՕԳՆՈՂ ԿԳՏՆՎԻ»

58-ամյա Կարինե Բարսեղյանը ծնվել եւ իր ողջ կյանքն ապրել է Ստեփանակերտում: Ընտանիքը կորցրել է արցախյան պատերազմների ընթացքում եւ մնացել միայնակ:

«Երբ սեպտեմբերի 19-ին սկսվեց պատերազմը, իջանք նկուղ եւ մնացինք այնտեղ, մինչեւ որ 21-ին հայտարարեցին Արցախը դատարկելու մասին: Հարեւանուհիս առաջարկեց իրենց մեքենայով դուրս գալ, եւ ես համաձայնեցի: Ստեփանակերտում ինձ բոլորը ճանաչում են որպես ժողովրդասեր մարդու, եւ համոզված էի, որ ծանոթներս ինձ անօգնական չեն թողնի: Սեպտեմբերի 25-ին հարեւանուհուս ամուսինը գնաց Հայկազովի զորամաս՝ վառելիք ստանալու, բայց պայթյունի հետեւանքով մահացավ: Հաջորդ օրը հարեւանուհուս աղջիկը զանգեց ու ասաց, որ հայրը մահացել է: Օրեր անց հարեւաններիս հետ ընդհանուր տրանսպորտով շարժվեցինք դեպի Գորիս»,- Armlur.am-ի հետ զրույցում պատմում է Արցախից բռնի տեղահանված Կարինե Բարսեղյանը:

Հայաստան տեղափոխվելուց հետո տիկին Կարինեին Վանաձորի հյուրանոցներից մեկում սենյակ են տրամադրել՝ապրելու: Մեր զրուցակիցն ասում է, որ հյուրանոցի տնօրենը սենյակն անվճար էր տրամադրել իրեն, սակայն տիկին Կարինեն իրեն վատ էր զգում երկար այնտեղ ապրելուց: Ասում է՝ չի ուզում մարդկանց իր վիճակով նեղություն տալ: Մտքին եկավ գնալ Աբովյան քաղաք, ասել էին՝ այնտեղ եւ տների վարձն է ցածր, եւ տարիքին համապատասխան աշխատանք գտնելը հեշտ կլինի: Գնաց, բայց ոչ տուն գտավ, ոչ էլ աշխատանք: Հետո էլ փորձեց Երեւանում մինիմալ պայմաններով տուն գտնել. չգտավ:

«Քոռ ու փոշման ետ վերադարձել եմ Վանաձոր: Այստեղ բավականին ցուրտ է, իսկ ինձ առողջական տարբեր խնդիրներ ունեմ, որոնք ցրտից ավելի են բարդանում: Որտեղ որ հիմա ապրում եմ, ընդհանրապես տան պայմաններ չեն. գազ, տաք ջուր չկա, տունը խոնավ է, տաքացուցիչ միացնում եմ, տան օդն էլ չի փոխում: Ուզում եմ խնդրել բոլորին մինիմալ պայմաններով, մի քիչ մատչելի գնով վարձով տուն տրամադրել, որպեսզի կարողանամ եւ տան վարձ տալ, եւ մարդու նեղություն չտալ: Ես մարդկանց շատ եմ օգնել, կարծում եմ՝ ինձ էլ օգնող կգտնվի»,- ասում է մեր զրուցակիցը:

Կարինե Բարսեղյանին օգնող ցանկացողները կարող են զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ +374 96 702473:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ 120

ՀԱՅ–ՉԻՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Արամ Խաչատրյանի 120-ամյակի առթիվ 2023թ.-ին Չինաստանում մի շարք միջոցառումներ են կազմակերպվել. Պեկինում առաջին անգամ անցկացվել է հայ մեծ կոմպոզիտորի անունը կրող միջազգային մրցույթ՝ «ջութակ» մասնագիտական կարգում:

ՋԼՄ-ների հաղորդմամբ՝ Խաչատրյանի անվան մրցույթը համատեղ կազմակերպել են «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամը, Չինաստանի ազգային օպերային թատրոնը եւ Չինաստանի պետական կառույցները: Մրցույթի անցկացմանը Չինաստանում խրախուսել է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն էլ չինական կողմից հրավիրված է եղել եզրափակիչ փուլում նվագակցելու մրցույթի մասնակիցներին, ինչպես նաեւ հանդես գալու գալա համերգի ընթացքում: Մրցույթն անցել է բարձր մակարդակով՝ արժանանալով այդ երկրում դասական երաժշտության սիրահարների եւ մասնագետների բարձր գնահատանքին:

Ստուգատեսի գալա համերգի եւ մրցանակաբաշխության ընթացքում Չինաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Մանասարյանը եւ «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի տնօրեն Մարտին Թովմասյանը բարձր են գնահատել Արամ Խաչատրյանի անունը կրող մրցույթի անցկացումը Չինաստանում՝ կարեւորելով երկու երկրների միջեւ մշակութային կապերի ամրապնդումը:

Խաչատրյանի անվան մրցույթի ժյուրին կազմված է եղել հեղինակավոր երաժիշտներից՝ Յարոսլավ Նադրժիցկի, Հրաչյա Ավանեսյան, Անդրեաս Ֆլոր, Իգոր Պետրուշեւսկի, Սոյոնգ Յուն եւ այլք: Մրցույթին մասնակցել են ջութակահարներ ավելի քան տասը երկրից, եզրափակիչ փուլում նրանք կատարում էին Արամ Խաչատրյանի Ջութակի կոնցերտը: Մրցույթում հատուկ մրցանակի է արժանացել Հայաստանը ներկայացնող երիտասարդ ջութակահարուհի Օվսաննա Հարությունյանը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ, չինական կողմի հրավերով հանդես է եկել նաեւ երեք համերգով: Համերգները կայացել են դեկտեմբերի 29-ին Պեկինի ազգային օպերային թատրոնում, դեկտեմբերի 30-ին եւ 31-ին՝ Շինջինգշան վարչական շրջանի մշակույթի կենտրոնում: Համերգային ծրագրերում ընդգրկված են եղել նաեւ Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները:

Մաեստրո Սերգեյ Սմբատյանն ընդգծում է, որ Արամ Խաչատրյանն իր արվեստով Հայաստանում եւ Հայաստանից դուրս շատ մարդկանց է միավորում: Նրա խոսքով՝ Չինաստանում կայացած մրցույթի շնորհիվ բազմաթիվ երաժիշտներ սովորեցին եւ իրենց ծրագրերում ընդգրկեցին Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները՝ դառնալով հայկական հնչյուններն աշխարհում տարածող երաժշտական դեսպաններ:

Խաչատրյանի անվան մրցույթը եւ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգները լայնորեն լուսաբանվել են չինական հեռուստաընկերություններով եւ զանգվածային այլ լրատվամիջոցներով: Մրցույթի 3 փուլերի ուղիղ հեռարձակման արդյունքում արձանագրվել են ավելի քան 430 հազար առցանց դիտումներ, իսկ այլ լրատվամիջոցների միջոցով մրցույթի եւ Սիմֆոնիկ նվագախմբի համերգների դիտումները գերազանցել են 900 հազարը: Դիտումների մեծ ցուցանիշը նպաստել է Խաչատրյանի արվեստի հանրահռչակմանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՎԱՃՈՒՄ

Հայազգի Մարիա Ալեքսանյանը "Вьвam, Россия" ձիասպորտի ակումբի համառուսաստանյան ամանորյա մրցաշարում դարձել է երրորդ մրցանակակիր:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում կայացած ձիասպորտի մրցաշարում 16-ամյա Մարիա Ալեքսանյանը գրավել է երրորդ հորիզոնականը՝ դառնալով բրոնզե մեդալակիր:

Այս նվաճումը Ալեքսանյանի առաջին հաջողությունը չէ: 2023-ի տարեսկզբին Մարիա Ալեքսանյանն Համառուսաստանյան ձիասպորտի մրցաշարում դարձել է երկրորդ մրցանակակիր՝ հաղթահարելով 100 սմ արգելքը:

ՏԵՂԱՓՈԽՎՈՒՄ Է «ՍՈՉԻ»

Երեւանի «Փյունիկի» կիսապաշտպան Հովհաննես Հարությունյանը տեղափոխվում է ռուսական «Սոչի»:

Այս մասին հայտնում է «Փյունիկ»-ի մամուլի ծառայությունը: Հարությունյանը խաղացել է երեւանյան ակումբի ակադեմիայի տարբեր տարիքային խմբերում եւ 2016 թվականին նորամուտը նշել «Փյունիկի» գլխավոր թիմում:

Հարությունյանը, 2021 թվականին «Արարատ-Արմենիայից» վերադառնալով հարազատ ակումբ, օգնել է թիմին նվաճել Հայաստանի չեմպիոնի տիտղոսը: Այդ մրցաշրջանում Հարությունյանը ներքին առաջնություններում 34 խաղից հետո դարձել էր 4 գոլի եւ նույնքան արդյունավետ փոխանցման հեղինակ:

2022-ի ամռանը Հարությունյանը մեծ ներդրում ունեցավ «Փյունիկի» եվրագավաթային պատմական դարձած շրջանում, որտեղ թիմը հաղթահարեց Չեմպիոնների լիգայի որակավորման առաջին, երկրորդ փուլերը, այնուհետեւ նորամուտը նշեց Կոնֆերենցիաների լիգայի խմբային փուլում, տարավ հայկական ակումբների առաջին հաղթանակը եվրոպական մրցաշարի խմբային փուլում: 24-ամյա ֆուտբոլիստը նախորդ ամառվա եվրագավաթներում հատկապես փայլեց արդյունավետությամբ՝ 5 խաղում դառնալով մեկ գոլի եւ 3 գոլային փոխանցման հեղինակ:

Հարությունյանը նախորդ մրցաշրջանում «Փյունիկի» գույներով հատեց 100 հանդիպման շեմը: Արդեն 2023/24-ի աշնանային հատվածում «Փյունիկ»-ի սանը գրանցեց անձնական ռեկորդ ու անցկացնում էր կարիերայի ամենաարդյունավետ մրցաշրջանը. ներքին մրցաշարերում Հովհաննեսն իր անվան դիմաց ունի 11 գոլ եւ 3 արդյունավետ փոխանցում:

Հարությունյանը «Փյունիկ» տեղափոխվելուց հետո առաջին անգամ հրավիրվեց Հայաստանի ազգային հավաքական ու աստիճանաբար ամրապնդվեց ազգային ընտրանու կազմում: Նա ընդգրկվել է նաեւ «Հայաստանի լավագույն ֆուտբոլիստ» քվեարկության լավագույն հնգյակում 2022 թվականի արդյունքներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՆԻԲԱՆԿ

2024թ-ի փետրվարի 2-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 1 լոտ՝ ոսկյա ջարդոն 17 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 15,5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 236.000 ՀՀ դրամ: Թիվ 2 լոտ՝ ոսկյա ջարդոն 44,2 գր. ընդհանուր քաշով, որից 21,8գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 18,6 գր.) 500 հարգի՝ 238.800 ՀՀ դրամ, 22,4 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 19 գր.) 585 հարգի՝289.300 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 528.100 ՀՀ դրամ: Թիվ 3 լոտ՝ ոսկյա ջարդոն 23,2 գր. ընդհանուր քաշով, որից 2 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը 500 հարգի՝25.600 ՀՀ դրամ, 11,6 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 10 գր.) 585 հարգի՝ 152.300 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 177.900 ՀՀ դրամ: Թիվ 4 լոտ՝ ոսկյա ջարդոն 53,3 գր. ընդհանուր քաշով, որից 34,7 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 30,5 գր.) 500 հարգի՝391.500 ՀՀ դրամ, 18,6գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 16 գր.) 585 հարգի՝ 243.600 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 635.100 ՀՀ դրամ: Թիվ 5 լոտ՝ ոսկյա ջարդոն 53,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 45,3 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 689.900 ՀՀ դրամ: Թիվ 6 լոտ՝ ոսկյա ջարդոն 7,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 6,4 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 97.500 ՀՀ դրամ: Թիվ 7 լոտ՝ ոսկյա ջարդոն 8,3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 7 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 106.000 ՀՀ դրամ: Թիվ 8 լոտ՝ ոսկյա ջարդոն 22 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 18,7 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 284.000 ՀՀ դրամ: Թիվ 9 լոտ՝ ոսկյա ջարդոն 21,9 գր. ընդհանուր քաշով, որից 10.6 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 8.6 գր.) ոսկյա ջարդոնը 585 հարգի՝130.900 ՀՀ դրամ, 11.3 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 9 գր.) 500 հարգի՝ 115.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 246.400 ՀՀ դրամ: Թիվ 10 լոտ՝ ոսկյա ջարդոն 15,9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 12,7 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 193.400 ՀՀ դրամ: Թիվ 11 լոտ՝ ոսկյա ջարդոն 10,2 գր. ընդհանուր քաշով, որից 4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 3 գր.) ոսկյա ջարդոնը 500 հարգի՝ 38.500 ՀՀ դրամ, 6.2 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 6 գր.) 585 հարգի՝ 91.300 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 129.800 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով՝ վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ.՝ 043 00 42 27

Յունիբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

● *Հունվարի 20-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Վերջին կանգառ» ներկայացումը: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ավտոապահովագրողների բյուրոն ո՞ր դեպքում է հատուցում տուժած անձանց պատճառված վնասները:

Արամ Հարությունյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ռ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝տեղեկացնում ենք, որ բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է տուժած անձանց պատճառված վնասները, եթե՝

- վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձն անհայտ է: Այս դեպքում Բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է միայն տուժած անձանց պատճառված անձնական վնասները:
- Վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր:
- Վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ:
- Վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ (սնանկ), եթե նա, օրենքի համաձայն, պարտավոր էր հատուցել պատճառված վնասը:

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ երաշխավորման ֆոնդը գոյանում է Բյուրոյի անդամների կողմից կատարվող միանվագ, պարբերական եւ լրացուցիչ վճարներից, օրենքով սահմանված այլ ձեւերով ներդրված միջոցներից, ինչպես նաեւ այն ակտիվներից, որոնցում ներդրվել են դրանք, եւ դրանց կառավարման արդյունքում ստացված եկամուտներից: Երաշխավորման ֆոնդի միջոցները սեփականության իրավունքով պատկանում են Բյուրոյին: Դրանք կարող են օգտագործվել բացառապես Երաշխավորման ֆոնդի համար օրենքով սահմանված նպատակներով եւ դեպքերում:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է որոշվում բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքի՝ դատական կարգով դադարեցման դեպքում սեփականատիրոջ կողմից վճարվող փոխհատուցման չափը:

Անաստաս Միքայելյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետեւյալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց եւ սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից եւ ոչ ավելի, քան 9 քառակուսի մետրը: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց եւ այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ֆրանսիայի ֆուտբոլի ազգային հավաքականի նախկին անդամ, Եվրոպայի չեմպիոն Նիկոլա Անելկան հայտարարեց Հայաստանում ֆուտբոլի ակադեմիա բացելու մտադրության մասին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 6 - 9 - 1 + 3
Կոտայքի լեռներ	- 5 - 8 - 1 + 2
Կոտայքի նախալեռներ	0 + 3 + 4 + 6
Գեղարքունիք	- 4 - 5 -1 + 4
Լոռի	- 8 - 13 + 2 + 7
Տավուշ	- 2 - 5 + 5 + 9
Արագածոտնի լեռներ	- 0 - 3 7 - 11
Արագածոտնի նախալեռներ	- 1 - 3 + 4 + 8

Արարատ	0 + 2 + 7 + 10
Արմավիր	- 1 - 3 + 6 + 9
Վայոց ձորի լեռներ	- 6 - 9 - 1 + 2
Վայոց ձորի նախալեռներ	- 2 - 4 + 4 + 7
Սյունիքի հովիտներ	- 2 - 4 + 5 + 7
Սյունիքի նախալեռներ	- 6 - 9 + 6 + 9
ԼՂՀ	- 4 - 8 + 1 + 4
Երեւան	- 1 - 3 + 3 + 5

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.1.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*